



ԷԶԵՐ ՎԵԼԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՑՅԱԼԻՑ

 որին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ ջ. Հայրապետը Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու պատմության վերջին հիմնամյակի ամենակարկառուն ազգային-Եկեղեցական դիմքերից մեկն է՝ իր հազվագյուտ բարեմասնություններով, բարձր կուստուկական արժանիքներով, վարչական ձիրքերով, ազգուասությամբ, իր անվաշառ հայրենասիրությամբ, քահանայապետի վայել պատկառանդով և առաքելունությամբ:

Նորին Ս. Օծությունը սարկավագության օրերից մինչև Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռը բարձրանալը, իր ողջ գիտակցական կյանքը, առանց մնացորդի, նվիրաբերել է հայ ժողովրդի հավատքին և մշակույթին, հայու Հայրենիքին, Հայաստանյաց Առաքելական Եկեղեցուն: Իսկ նրա զահակալությունը կուսափորչի Աթոռի վրա՝ մի նոր ու խոստումնալից էշ բացեց Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու նորադրույն շրջանի պատմության մեջ:

Ես հավակնություն շունեմ այս մի քանի ակնարկային տողերի մեջ անգամ ուսուագծել մեր ժամանակի մեծագույն Եկեղեցականի, անկեղծ հայրենասիրի, բարի ու անձրնդիր Հովհաննեսիրը, այլ մի քանի սրտագին տողերի մեջ, իբրև Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի անդրանիկ սաներից մեկը, ցանկանում եմ իմ որդիական բաղցը պարտականությունը կատարել, ոգեկոչելով Նորին Ս. Օծության սարկավագական և ուսանողական կյանքի մի քանի անմոռաց դրվագները, որոնցում արդեն պարզ երևում է ապագան մեծ Եկեղեցականը:

Դեռևս Գեորգյան Ճեմարանի ուսանող՝ Գեորգ Չորեգյանը ցուցաբերել է երաժշտական փայլում ընդունակություններ: «Երա-

րատ» ամսաթերթում կան փաստեր այդ մասին: Հանգուցյալ Մակար Կաթողիկոսի անվանակոչության տոնի օրը, 1888 թվականի դեկտեմբերի 8-ին, Էջմիածնի միարանությունը, Սինոդի արքեպիսկոպոս անդամները, Վեհարանում, Հրավիրված են եղել Կաթողիկոսի (Մակարի) կողմից ընթիրիք. Երեկոն ավելի հաճելի անց կացնելու համար, Ճեմարանի երգեցիկ խոմքն էլ, երաժշտության ուսուցիչ Ակոնդ վարդապետի (Հետազյում) Ս. Էջմիածնի լուսարարապետ Ջեվոնդ հպիսկոպոս) գլխավորությամբ Վեհարան է հրավիրվում: Ուսանողներից Գեորգ Չորեգյանը և Գեորգ Ահարոնյանը ղեկավարում են երգեցիկ խմբին: Ակոնդ վարդապետը դաշնամուրի վրա նվազակցում է նրանց: Երեկույթը անցնում է շատ բարձր և ոգևորիչ տրամադրությամբ: Մակար Կաթողիկոսը շատ գո՞յ է մնում Ճեմարանի ուսանողության առաջադիմությունից: Ահա թե ի՞նչ է գրնամ «Երարատաւոր» այդ մասին: «Երգեցողությունը այնքան ներդաշնակ և գրավիչ էր, որ երկու դասապետք ուսանողք երդորդ լսարանի, Գեորգ Չորեգյանը և Գեորգ Ահարոնյան արժանացան Նորին Օծությունից ստանալու իրքն պարզ մի մի արժաթյա ժամացուց իրանց շղթայով»¹:

Գեորգյան Ճեմարանը, իր գոյության առաջին իսկ օրերից, հայ կուստուրայի պատմության մեջ կատարել է պատվավոր գեր. Ճեմարանը տվել է մշակներ, որոնցից հայտնի են պատմաբան Ստ. Մալխասյանը, բանաստեղծ Ավետիք Իսահակյանը, գրող Դերենիկ Դեմիրճյանը և այլն: Նա տվել է նաև իրենց կոչմանը պիտակից հոգևորականների մի սերունդ, որի ներկայացնուցիչ-

1. «Երարատ», 1888 թ., էջ 786.

Ներս են մեր ներկա Հայրապետը՝ Գեղորգ
Զ.ը. Հանգուցյալ Կարապետ Տեր-Մկրտչան
դիտնական եպիսկոպոսը, մեր անմոռանա-
լի մատենագրագետ-աստվածաբան Գարե-
գին Հովհաննեսը (Մեծի Տանն Կիլիկիո
Կաթողիկոս) և Հայ երգի ու երաժշտության
մեծ կախարդ Կոմիտաս Վարդապետը:

Ճեմարանը իր բացման օրից՝ 1871 թվականից մինչև 1889 թվականը երիտասարդ ճեմարանական կուսակրոն հոգևորական շիտվել: Փաստերը վկայում են այն մասին, որ անդրանիկ կուսակրոնով թյունը ճեմարանականներից ընդունել են Վեհափառ Հայրապետը և իր ընկերները: Ակրարատուր մեղադասին տալիս է հետեւյալ տեղեկովթյունը. Անմուլյա 17-ը և 18-ը հունիս (1889 թ.) նշանավոր օրեր էին: Այդ օրերը կատարվեցին ի վեղուց ցանկալի ձեռնադրովթյունք Ս. Գարանեի վանքում՝ սրբագրովթյամբ գիրաշնորհ Ներսես եպիփառպոսի: Ս. Էջմիածնի Տեմարանը հիմնաժողովանայից երկունքից հետքը ի վերջո տվեց երախայրիքը Հայ Եկեղեցուն և ազգին: 17-ին առավոտյան սարկավագովթյան աստիճան ստացան Շեմարանի տեսուզ մեծահարդ Արշակ Նահապետյան և Տեմարանի ուսումնավարտ պ. պ. Կարասպետ Տեր-Մկրտչյան և Գեորգ Չոռեքչյան ու երրորդ լսարանի ուսանող Գարեգին Հովսեփիանու^{1:}

Վեհափառ Հայրապետը երբ ավարտում է ձեմարանը, տեսչությունը նկատի առնելով նրա և Կարապետ Տեր-Մկրտչյան սարկա-վագի փայլուն ընդունակությունները, միշ-նորդում է Մակար Կաթողիկոսի մոտ, որ-պեսզի այդ սարկավագները Եվրոպա ու-ղարկվեն բարձրագույն ուսում ստանալու համար: Գործի հաջողությանը համար մի-չամտում ու բարեխտում է Մալաքիա ար-քեափիսկոպոս Օրմանյանը, որը այդ ժամա-նակ ձեմարանի աստվածաբանության դա-սախոսն էր: Թիֆլիսի Տափի թաղի Ս. Գե-որգ (Քամոյանց) եկեղեցու երեցփոխ Գեորգ Աճեմյանը ժողովրդի զգացմունքների թարգ-մանը հանդիսանալով, եկեղեցու եկամտից տարեկան 1.680 ոռոգի հատկացնում է այդ գործի համար: Որոշում են երկու որդեգիր պահել արտասահմանում, որպեսզի ձեմա-րանը հետաքայում ապահովի բարձր, մաս-նագիտական կրթություն ստացած հոգևո-րական դասականներով: Ձեմարանը առա-ջարկել էր արդեն երկու թեկնածուներ՝ Գե-օրգ և Կարապետ սարկավագներին: Մակար կաթողիկոսը ընդունակությունը եղած ազգօգուտ նվիրատվությանը, օրհնում է Նվիրատվին մասնավոր կոնդակով: «Արարտառում այդ

մասին կարդում ենք հետևյալը. «Նորին վեհափառությունը բարեհաճելով ընդունել այդ նպաստը (1.680 ո. — Ա. Գ.), օրննելով պ. Սճեմյանին և ժողովրդին իր յարապետական օրինությամբ և հրամայեց նոր ձեռնադրած շնորհունակ Կարգապետ և Գերող սարկավագներին արտասահման ուղարկել, ուր և նորա շարունակում են յուրյանց ուսումը, համաձայն պատվերի Նորին Սրբության, ըստ հրահանդության ուսումնական խորհրդ ձեմարանիստ²:

Գեղորգ սարկավագը Գերմանիայում բարձրագույն երաժշտական և աստվածաբանական կրթություն է ստանում: Ապա, ուսումը ավարտելոց հետո, նպատակահարթակը է համարում իր ծննդավայր Նոր-Նախիջևանի թեմական դպրոցում, Կոկոյան օրիտրդաց տասնամյա դպրոցում երկար տարիներ դասվանուի:

1952 թվականի ամառը՝ Վեհափառ Հայ-
րապետի բարեհաճ կարգադրությամբ, ինձ
և ընկերոցս՝ Գուրգեն սարկավագին բախտ
վիճակվեց լինել Վեհափառի ծննդավայրում՝
Նոր-Նախիջևանում, Ս. Գրիգոր եկեղեցում
սպասավորելու: Մենք այնտեղ եղանք այն
շենքում, որտեղ երկար տարիներ ամենքին
սիրելի Հայրապետը զասավանդել է: Մենք
ծանոթացանք Վեհափառի աշակերտների և
աշակերտությների հետ, որոնք գեռ հիշում
են իրենց ուսուցիչ «Հայ» սարկավագին:
Նրանք շատ թանկափառ և հավետ անժոռու-
սալի հիշատակներ են պահել իրենց սիրելի
ուսուցչից՝ Գեորգ սարկավագից: Երբեք չեն
կարողանում մոռանալ մի դեպք: Օգոստոսի
մի պայծառ, արևոտ կիրակի օր էր. առա-
վոտյան ժամերգությունը վերջանալուց հե-
տո սկսվեց պատարագը: Նկեղեցին լցված
էր հավատացյալների բազմությամբ, պա-
տարագը երգում էր տեղացիներից բաղկա-
ցած երգախումբը: Երգեցիկ խմբի մեջ մի
տիկին սոլոներն էր երգում հրաշալի և ան-
թերի կատարումով: Տիկինը այնպիսի ար-
վեստով էր երգում, որ ես մինչև անդամ
հջմիածնի երգեցիկ խմբում չէի հանդիպել
այդպիսի սովորություն: Նա ինձ հիշացրել էր:
Պատարագից հետո ընկերոցս՝ Գուրգեն սար-
կավագի հետ որտեղինք ծանոթանալ այդ
համեստ երգչունու հետ և իմանալ որտեղ է
սովորել այդպիսի երաժշտություն: Երեց-
փոխ Շեմանյանին դիմեցինք, որ մեզ ծա-
նաթացնի սոլիստի հետ: Բայց ահա' և նա.
գալիս է դեպի մեզ մի պատկառելի տիկին,
մոտենում է և առաջին հերթին հարցնում
Վեհափառի առողջության մասին: Ես հա-
մարձակություն եմ առնում և հարցնում եմ

1. «Արարատ», 1889 թ., էջ 353:

2. «Արարատ», 1890 թ., էջ 628:

թե արդյոք ինքը չէ՝ պատարագի սոլիստը։ Տիկինը շիկնում է մի պահ հայ կնոջ ծանոթ ամոթիսածությամբ և ապա ավելացնում։ «Այո, ես էի, ես սովորել եմ Կոկոյան դպրանցում, որտեղ տառացիչն է եղել «հայո» սարկավագը։ Զարմացած հարցրի, թե ո՞վ է «հայր սարկավագը։ Տիկինը ներողամտարար ժպտաց ու պատասխանեց։ «Գիտե՞ք, տղաս, մենք, նախիշևանցիներս սովորել ենք Վեհափառին անվանել «հայր սարկավագ»։ Թեև նա այսօր Ամենայն Հայոց Հայրապետն է, բայց մեզ համար՝ առաջվա «հայր սարկավագը։ Այնուհետև նա պատմում է մեզ Վեհափառի մասին, նրա դասավանդման մասին, նրա խստապահանջության մասին, նրա բարձր ու ազնվական հոգու մասին... Տիկինը բացեց իր անցյալի հիշատակների ծրարը... նա հապատությամբ մեզ ասաց, որ ինքը մասնակցել է 1908 թվականի «հայր սարկավագի ղեկավարած համերգին։ Անրարատուում կարում ենք այդ համերգի մասին։ ԱՄարտի 8-ին (1908 թ.) Նոր-Նախիշեվանում կայացել է հոգևոր համերգ, որին մասնակցել է նաև Հայոց Ս. Լուսավորիչ եկեղեցու երգեցիկ խոմերը հայր սարկավագ Չորեքշանի ղեկավարությամբ։ Համերգը եղել է խառն՝ լատինական, հայկական, հրեական հոգևոր երգերի։ Հայկական երգերի երկրորդ բաժինը առանձնապես աշքի է ընկել յուր արժանավորությամբ։ Հայր սարկավագ Չորեքշանը արժանացել է «զալ և հմուտ» երաժշտի կոչման։¹

Վեհափառը բազմակողմանիովեն զարգացած երաժշտագետ է. նրա հետինակություններից հայտնի է «Երեք խմբերգ», հրատարակած՝ Պետերբուրգում 1908 թվականին հետեւյալ վերնագրով։ «Երեք խմբերգ, մշակեց և ներդաշնակեց Ս. էջմիածնի միաբան Գեղարգ սրբ։ Չորեքշան, Պետերբուրգ, գիր 70 կ.»։

Այդ հրատարակած գրքույկը գրախոսել է Ռուբեն արեղան (հանգուցյալ Մանասյան Ռուբեն արքեպիսկոպոսը) «Արարատուում, գրելով. «Անծանօթ չէ հայր Գեղորգ սարկավագ Չորեքշանը, Ս. էջմիածնի համբավոր միաբաններից. իր բարձր երաժշտական կրթությունը ստացել է արտասահմանում և երկար տարիներ երաժշտ-

տություն դասավանդել Նոր-Նախիշևանի թեմական հոգևոր դպրոցում։ Երաժշտական գործունեության գլխավոր կենտրոնը եղել է Նոր-Նախիշևանը, որտեղ և իր բորոր հեղինակությունները դեռ շտագգրված հրապարակ է հանել խմբերի միջոցով, համերգներում և երեկովիթներում։

«Այդ հեղինակություններից է «Երեք խմբերգ, որի մեջ պարունակված է 1) «Տէ՛ր, կեցո»— Մեներգ և խմբերգ դաշնամուրի նվագակցությամբ, գրված ֆա մինորով, 2) «Երբ որ բացուին»— Երկերգ I և II սոպրանի համար, դաշնամուրի նվագակցությամբ, գրված ֆա մինորով, 3) «Մայր Արաքսի»— Երկերգ սոպրանի և ալտի համար, դաշնամուրի նվագակցությամբ, գրված ֆա մինորով։ Բազմաթիվ հեղինակություններից միայն այս երեքն է առ այժմ լրաց տեսներացնուած նմուշ (Ընդգծումը մերն է.— Ա. Գ.).

«Առաջինը որպես ազգային օրհներգ, իսկ երրորդը որպես Գամառ Քաթիպայի անմահ աՄարտի 8-ին (1908 թ.) Նոր-Նախիշեվանում կայացել է հոգևոր համերգ, որին մասնակցել է նաև Հայոց Ս. Լուսավորիչ եկեղեցու երգեցիկ խոմերը հայր սարկավագ Չորեքշանի ղեկավարությամբ։ Համերգը եղել է խառն՝ լատինական, հայկական, հրեական հոգևոր երգերի։ Հայկական երգերի երկրորդ բաժինը առանձնապես աշքի է ընկել յուր արժանավորությամբ։ Հայր սարկավագ Չորեքշանը արժանացել է «զալ և հմուտ» երաժշտականության։²

«Ճանկալի է օր առաջ տեսնել հրատարակած հայր Չորեքշանի մյուս երկերը»։ 1913 թվականից մինչև այսօր, որպես հմուտ երաժշտագետ, Վեհափառը դրել է և գրի է առել «բազմաթիվ հեղինակություններ»։ յանկալի է, որ Վեհափառը իր սնդուկից հանի դրանք և սեփականությունը դարձնի երաժշտական աշխարհին։ Անկասկած, դրանով կշահի հայ երաժշտական կուլտուրայի պատմությունը։

Անշուշտ սրանով չի սպառվի Վեհափառ Հայրապետի գրական բազմակողմանի վաստակը։

Ցանկալի է, որ մի սիրուն ծաղկաքաղի կազմվի և հրատարակվի Վեհափառի թեմական կություններից։

Եվ դա կլինի մեր ժողովրդի սրտագին ու անկեղծ առհավատչան մեծագործ Հայրապետի պաշտելի անձնավորության և բագմազնորհ արժանիքների նկատմամբ։

1. «Արարատ», 1908 թ., էջ 432.

2. «Արարատ», 1913 թ., էջ 674.

